ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգի վերաբերյալ

Գործողություն 1.2. Համագործակցություն սպառողների և արտադրողների հետ I

Առաքելությունն իրականացրել են

Տկն Անեգրետե Վուլֆը Դանիայի վիճակագրությունից
Պրն Լարս Թիգիսենը Դանիայի վիճակագրությունից

2015թ. դեկտեմբերի 7-10

Տարբերակ. Վերջնական

Հայաստանի Հանրապետության
ազգային վիճակագրական
ծառայություն

STATISTICS DENMARK

<u>Փորձագետների կոնտակտային տեղեկատվություն</u>

Անեգրետե Վուլֆ
Դանիայի վիճակագրություն
Սեյրոգադե 11
DK-2100 Կոպենհագեն Ø
Դանիայի
Հեռ: +45 3917 3155
Էլ-փոստ: awu@dst.dk

Լարս Տիգիսեն
Դանիայի վիճակագրություն
Սեյրոգադե 11
DK-2100 Կոպենհագեն Ø
Դանիայի
Հեռ: +45 2840 3941
Էլ-փոստ: lthygesen@gmail.com

Բովանդակություն

Հապավումների ցանկ 3

1. Ընդհանուր մեկնաբանություններ 4
2. Գնահատում և արդյունքներ 4
   2.1. Համագործակցություն սպառողների հետ. Լրատվամիջոցներ 4
   2.2. Վիճակագրության համար վարչական տվյալներ տրամադրողների հետ համագործակցությունը 6
   2.3. Ազգային վիճակագրական համակարգի համակարգումը (ԱՎԾ) 7
3 . Եզրակացություններ և առաջարկություններ 8
4. Մինչև հաջորդ՝ 2016թ. մարտին կայանալիք առաքելությունից առաջ գործողությունների ճանապարհային քարտեզ և ժամանակացույց 9
   ա. Համագործակցություն սպառողների հետ 9
   բ. Վիճակագրության համար վարչական տվյալներ տրամադրողների հետ համագործակցություն 9
   գ. Ազգային վիճակագրական համակարգի համակարգում 9
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք 10
Հավելված 2. Առաքելության ծրագիրը ..... **Fejl! Bogmærke er ikke defineret.**
Հավելված 3. Անձինք, ում հետ փորձագետները հանդիպել են .... **Fejl! Bogmærke er ikke defineret.**
Հավելված 4. Լրատվամիջոցների՝ որպես սպառողների հետ հանդիպմանը հնչեցրած հարցերի ցանկը ..... **Fejl! Bogmærke er ikke defineret.**

Հապավումների ցանկ

ԵՄ	Եվրոպական միություն
ID	Նույնականացման համարանիշ
ԱՎԻ	Ազգային վիճակագրական ինստիտուտ (օր. ՀՀ ԱՎԾ)
ԱՎՀ	Ազգային վիճակագրական համակարգ (պաշտոնական վիճակագրության)
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՓՀ	Փոխըմբռնման հուշագիր

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Այս առաքելության զեկույցը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» Թվինինգ ծրագրի շրջանակներում: Սա բաղադրիչ 1-ի երկրորդ առաքելությունն էր, որի համար պլանավորված գործողություններն իրականացվել են համաձայն ժամանակացույցի:

Առաքելության նպատակներն էին.

- Քննարկումներ նրա վերաբերյալ, թե ինչպես աշխատել վիճակագրության սպառողների և նրանց տարբեր կարիքների հետ
- Պրեզենտացիա և քննարկումներ պետական մարմինների հետ տվյալների փոխանակման վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի մշակման մասին
- Սպառողների կանոնավոր վերապատրաստումների կազմակերպման մասին քննարկումներ
- Սպառողների և արտադրողների հետ համագործակցության պլանի մշակում
- Քննարկումներում համապատասխան շահագրգիռ կողմերի ներգարվում

Խորհրդատուներն իրենց երախտիքն են հայտնում բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին, ում հետ հանդիպել են՝ նրանց աջակցության և արժեքավոր տեղեկատվության համար, որոնք ստացել են Հայաստանում իրենց գտնվելու ընթացքում, և ինչը մեծապես հեշտացրել է իրենց աշխատանքը: Սույն հաշվետվության մեջ տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են խորհրդատուներին և որևէ կերպով չեն արտահայտում ԵՄ, ՀՀ ԱՎԾ կամ Դանիայի վիճակագրության տեսակետները:

2. Գնահատականներ և արդյունքներ

Առաքելությանն անդրադարձ է արվել երեք հիմնահարցի.

1. *Համագործակցությունը սպառողների հետ. Լրատվամիջոցներ*
2. *Համագործակցությունը վիճակագրության համար վարչական տվյալներ տրամադրողների հետ*
3. *Ազգային վիճակագրական համակարգի համակարգում*

2.1. Համագործակցությունը սպառողների հետ. Լրատվամիջոցներ

Իրականացվել է լրատվամիջոցների՝ որպես սպառողների հետ հաջողված հանդիպում, որը օրինակ ծառայեց, թե ինչպես կարելի է իրականացնել այլ սպառողների հետ հանդիպումները: Հանդիպման նախապատրաստական փուլում ՀՀ ԱՎԾ-ն պատրաստեց և փորձագետների հետ քննարկեց 21 հարց՝ լրատվամիջոցներին ուղղելու և նրանց մեկնաբանությունները խթանելու նպատակով: Դրանք առնչվում էին շատ տարբեր հիմնահարցերի, օրինակ՝ տվյալների աղբյուրները, որոնցից օգտվում են սպառողները, հրապարակված վիճակագրության յուրաժամանակությունը, արտադրված վիճակագրության նկատմամբ վստահությունը, թողարկման օրացույցի մասին իրազեկությունը և այլն: Հարցերի ամբողջ ցանկը կցված է սույն հաշվետվությանը (հավելված 4): Այս հարցերի խումբը կարող է օգտագործվել որպես ներշնչման աղբյուր սպառողների այլ խմբերի հետ հանդիպումներին՝ քննարկումները խթանելու համար:

Հնարավորինս բաց հետադարձ կապ ապահովելու համար հանդիպումն իրականացվեց այնպիսի ձևաչափով, որի համաձայն փորձագետներն ուղղում էին հարցերը և վարում քննարկումը: ՀՀ ԱՎԾ պաշտոնատար անձինք խոսում էին միայն մասնավոր դեպքերում, երբ նրանց խնդրվում էր: Այս մոդելը շատ լավ աշխատեց և կարող է օգտագործվել սպառողների հետ հետագա որոշ հանդիպումների համար: Սակայն կարևոր է, որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն հաստատի իր սեփական կապերը և իրականացնի նմանատիպ հանդիպումներ կանոնավոր հիմքերով:

Թեև ներկա էր միայն 5 լրատվամիջոց, ակռա էր տեսակետների և տեղեկատվության բաց և կառուցողական փոխանակում, և լրատվամիջոցների ներկայացուցիչները նպաստեցին հանդիպմանը իրենց անկեղծ փաստարկներով:

Լրատվամիջոցների կողմից արված մեկնաբանությունները և խորհուրդները ՀՀ ԱՎԾ-ն հաշվի կառնի տարածման հետագա զարգացումներում և որպես գերակայություն դիտարկումներում: Դրանք ներառում էին.

- ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ. ՀՀ ԱՎԾ-ն համարվում է հուսալի աղբյուր: Սակայն, թվում է, նրանք ոչ միշտ են օբյեկտիվ: ՀՀ ԱՎԾ-ն պետք է ցուցադրի, որ ինքն անկախ է: (օր. բացատրի, որ հետևում է Վիճակագրության փորձառության օրենսգրքին, ինչը վերահսկվում է Եվրոստատի կողմից, իրականացվել է թեթև փորձագիտական ուսումնասիրություն և այլն)
- ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄ. Լրատվամիջոցները չեն օգտվում և տեղյակ չեն հասանելի փաստաթղթավորումից (Որակի հռչակագրեր): Սակայն նրանք զգում են, որ կարիք ունեն հասանելի և հասկանալի բացատրությունների:
- ԹՈՂԱՐԿՄԱՆ ՕՐԱՑՈՒՅՑ. Տեղյակ չեն վիճակագրական հրապարակումների օրացույցից, և նրանից որ օրացույցի կանխավ հրապարակումը ԱՎԾ քաղաքական ազդեցություններից անկախ լինելու խորհրդանիշ է:
- ԿԱՊ. Վիճակագրության անհրաժեշտության դեպքում լրատվամիջոցներն օգտվում են ՀՀ ԱՎԾ կայք-էջից, կամ կապվում են փորձագետների հետ հեռախոսով: Սա բավարար է: Վիճակագիրները հասանելի են և սովորաբար կայք-էջում որոնումը նույնպես բավարար է:
- ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆԵՐ և ՍԽԱԼՆԵՐ. Լրատվամիջոցները ամբողջությամբ իրազեկ են զգում, երբ հրապարակված տվյալները սխալների առկայության դեպքում ուղղվում են: Նրանք նաև տեղյակ են, որ նախնական տվյալները կարող են փոխվել, երբ ավելի ուշ ներկայացվեն վերջնական տվյալները:
- ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐ. Մեծ հաշվով լրատվամիջոցները բավարարված են ՀՀ ԱՎԾ-ից: Սակայն նշվել է, որ մասնավորապես պետք է բարելավվեն տնտեսական, կրթական, և աշխատաշուկայի վիճակագրությունները, ինչպես նաև կապը կրթության և աշխատաշուկայի միջև:
- ԲԱՑՈՒԹՅՈՒՆ. Լրատվամիջոցները և ՀՀ ԱՎԾ-ն (փոխադարձաբար) մեծապես հետաքրքրված են կապը պահպանելու և ընլայնելու հարցում: Լրատվամիջոցները ցանկանում են հրավիրվել սեմինարների և քննարկումների հետևյալի վերաբերյալ.
    - Տարբեր թեմաներ
    - Ավելի շատ իմանալ, թե ինչ շրջանակի և պայմանների ներքո է աշխատում ՀՀ ԱՎԾ-ն
    - Իմանալ, թե ինչպես է արտադրվում և միջազգայնորեն տարածվում վիճակագրությունը:

Նույնականացվեցին արտաքին սպառողների համար վերապատրաստման կարիքները: Լրատվամիջոցների ներկայացուցիչներն արտահայտեցին հետաքրքրություն ՀՀ ԱՎԾ կողմից կազմակերպվող սեմինարների և վերապատրաստումների նկատմամբ, որպեսզի ավելի լավ հասկանան և կարողանան վիճակագրությունն իրենց աշխատանքում օգտագործել:

2015թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ ԱՎԾ-ում ֆոկուս խմբի հանդիպումը լրատվամիջոցների ներկայացուցիչների՝ որպես սպառողների հետ (լուսանկարը՝ Արմենպրեսի)

2.2. Համագործակցությունը վիճակագրության համար վարչական տվյալներ տրամադրողների հետ

Անհրաժեշտ է ամրապնդել համագործակցությունը վիճակագրության նպատակով տվյալներ տրամադրողների հետ, որպեսզի.

- վստահ լինենք, որ վարչական տվյալներ տրամադրողները հասկանում են վիճակագրության կարիքները և անում են հնարավոր աղջամիտ ամեն բան այդ կարիքները բավարարելու համար
- Հասկանանք, արդյոք վարչական մարմնին կարող է օգնել իրենց իսկ արտադրած վիճակագրությունը
- Վստահ լինենք, որ ՀՀ ԱՎԾ-ն ամբողջությամբ տեղյակ է տվյալների բովանդակության և որակի մասին
- Ապահովվի տվյալների ժամանակին և արդյունավետ տրամադրում
- Վստահ լինենք, որ ՀՀ ԱՎԾ-ն վաղ նախազգուշացում է ստանում տվյալների փոփոխության դեպքում, օր. փոփոխված օրենսդրության արդյունքում

Մեկ այլ ծրագրում Նորվեգիայի վիճակագրությունը խորհրդատվություն է տրամադրել վարչական տվյալներ տրամադրողների հետ համագործակցության վերաբերյալ և ներկայացրել է նմուշ, որը կարող է օգտագործվել որպես հիմք ՀՀ ԱՎԾ աշխատանքի համար: Նմուշը քննարկվել է ԱԵ փորձագետների հետ և կատարվել են հետևյալ եզրակացությունները.

- Նորվեգիայի վիճակագրության կողմից ներկայացված համագործակցության համաձայնագրի (ՓԸ) նմուշը վիճակագրության նպատակով վարչական տվյալներ տրամադրողի հետ համապարփակ և շատ օգտակար մոդել է: Առաջարկվում է օգտագործել այն որպես քննարկումների հիմք տվյալները տրամադրողների հետ՝ համաձայնություններ ձեռք բերելու և համագործակցությունը բարելավելու նպատակով:
- Սակայն, հնարավոր է դժվար լինի տվյալներ տրամադրողներին համոզելը, որպեսզի համաձայնագրի բոլոր դրույթները կատարեն, քանի որ նրանց առաջնային նպատակը վարչարարությունն է այլ ոչ վիճակագրությունը: Սա կարող է անհրաժեշտություն առաջացնել համաձայնագրի նմուշի մեջ փոփոխություններ կատարել:
- ՓԸ-ն պետք է թարգմանվի հայերեն և փորձարկվի Բնապահպանության նախարարության հետ:

2.3. Ազգային վիճակագրական համակարգի համակարգում (ԱՎՀ)

Ազգային վիճակագրական համակարգի համակարգումը մասնավորապես նշված չէր տեխնիկական առաջադրանքում, բայց որոշվեց, որ օգտակար կլինի այս հարցի քննարկումն ընդգրկել ծրագրում, քանի որ սա առնչվում է վերոնշյալ 2.2 հարցին: Ազգային վիճակագրական համակարգը բաղկացած է երկրում պաշտոնական վիճակագրության բոլոր արտադրողներից: Փորձագետների կողմից ներկայացվել է պաշտոնական վիճակագրության սահմանում և ընդունվել՝ որպես ազգային վիճակագրական համակարգի հետ հետագա աշխատանքի հիմք: Սահմանումը հետևյալն է. պետական մարմինների/պետության կողմից ներկայացվող վիճակագրությունը, որը նկարագրում է երկրի և երկրի առանձին մասերի ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական իրավիճակը; պաշտոնական վիճակագրությունը պետք է տրամադրի քանակական և որակական տեղեկություն քաղաքացիների կյանքի հիմնական ոլորտների մասին, ինչպես օրինակ՝ տնտեսական և սոցիալական զարգացման, կենսապայմանների, առողջության, կրթության և բնապահպանության մասին: Պաշտոնական վիճակագրությունը պետք է տրամադրի համընդհանուր հենման շրջանակ քաղաքացիների և որոշում կայացնողների շրջանում քննարկումների համար:

Ազգային վիճակագրական համակարգի համակարգման մարտահրավերները և հնարավորությունները նկարագրված են՝ որպես հետագա ոգեշնչման աղբյուր: Դրանք են.
1. Ընդհանուր կենտրոնացվածություն (որը հնարավոր չէ, սակայն գուցե հնարավոր է այս ուղղությամբ քայլեր կատարել)
2. Համընդհանուր ստանդարտներ
    - Կոնկրետ կենտրոնական վիճակագրական հասկացությունների համընդհանուր սահմանումներ
    - Ելքային տվյալների ստանդարտներ մեթատվյալների ստանդարտներ

3 Ուղեցույցներ, օրինակ՝ ընտրանքի, սեզոնային հարմարեցումների վերաբերյալ

4. Տվյալների (միկրոտվյալների) փոխանակում, նույնականացման համարանիշով/ID կամ առանց դրա
5. Համընդհանուր տարածում
    - Սպառողները չպետք է հոգան, թե ով է արտադրել վիճակագրությունը
6. Մեթատվյալների պորտալ
7. ԱՎԻ-ի կողմից հավաստագրում
    - «Պաշտոնական վիճակագրություն» ապրանքանիշ
    - Օրինակ՝ tilastokeskus.fi/meta/svt/index_en.html
    - Պետք է բավարարել ստանդարտների և որակի պահանջները այս ապրանքանիշը ձեռք բերելու համար
8. ԱՎԻ-ի կողմից աջակցություն, օր. վերապատրաստման դասընթացների կամ խորհրդատվության տրամադրում
9. Կազմակերպում
    - Երկկողմ հանդիպումներ ամենակարևոր արտադրողների հետ
        - Ո՞վ է զեկուցում միջազգային կազմակերպություններին
        - Որո՞նք են ամենակարևորները
    - ԱՎՀ համակարգման հանձնախումբ
        - Նախագահ և քարտուղար. ՀՀ ԱՎԾ
        - 2 կամ 4 հանդիպում տարեկան
        - Ստանդարտների և պահանջների շուրջ համաձայնություն
    - Փորձագիտական ուսումնասիրություն
        - Օր. ԵՄ կողմից
        - Պետք է ներգրավել այլ արտադրողների

Այս հարցի վերաբերյալ փորձագետները ներկայացրեցին պրեզենտացիա բոլոր բաժինների պետերին. Տե՛ս պրեզենտացիոն նյութը ԱՎՀ համակարգման վերաբերյալ:

3 .Եզրակացություններ և առաջարկություններ

Առաջարկությունների համար խորագրերն էին.

- ՀՀ ԱՎԾ-ն պետք է շարունակի ներգրավել սպառողներին՝ քննարկումներին հրավիրելով այլ կարևոր սպառողների ևս, ինչպիսիք են համալսարանները և նախարարությունները/Կենտրոնական բանկը
- Հաջորդ տարվա համար պատրաստել գերակայությունների պլան տարածման գործողությունների համար
- Տվյալները տրամադրողների հետ համաձայնագրի նմուշի փորձարկումից հետո այն պետք է հարմարեցնել՝ տվյալների այլ տրամադրողների հետ (Բնապահպանության նախարարություն) բանակցությունների նպատակով օգտագործելու համար
- ՀՀ ԱՎԾ-ն պետք է պատրաստի արտաքին վերապատրաստման դասընթացների պլան՝ հիմնված լրատվամիջոցների հետ սպառողների հանդիպմանը հնչած ցանկությունների վրա

4. Ճանապարհային քարտեզ և գործողությունների ժամանակացույց մինչև 2016թ. մարտին նախատեսված հաջորդ առաքելությունը

Ա. Համագործակցություն սպառողների հետ

- Լրատվամիջոցներ. ՀՀ ԱՎԾ-ն պետք է պատրաստի և բոլոր հրավիրված լրատվամիջոցներին ուղարկի հաշվետվություն ֆոկուս խմբի հանդիպման արդյունքների մասին: Հաշվետվությունը պետք է պարզաբանի, թե ինչ է ՀՀ ԱՎԾ-ն պատրաստվում անելու արտահայտված կարիքները բավարարելու համար, ներառյալ վերապատրաստման դասընթացները և սեմինարները:
- Նախարարություններ. ՀՀ ԱՎԾ-ն պետք է պատրաստվի հաջորդ ֆոկուս խմբի հանդիպմանը, որն իրականացվելու է հաջորդ առաքելությանը:
- Հետազոտություն. ՀՀ ԱՎԾ-ն պետք է նախապատրաստվի հաջորդ ֆոկուս խմբի հանդիպմանը, որն իրականացվելու է հաջորդ առաքելությանը:

Բ. Համագործակցությունը վիճակագրության նպատակներով վարչական տվյալներ տրամադրողների հետ

ՀՀ ԱՎԾ-ն պետք է.

- Փորձարկի ՓՀ նորվեգական նմուշը Բնապահպանության նախարարության հետ
- Զեկուցի արդյունքների մասին
- Նախագծի նմուշի փոփոխություններ

Գ. Ազգային վիճակագրական համակարգի համակարգում

ՀՀ ԱՎԾ-ն պետք է.

- Ընտրի պաշտոնական վիճակագրության երեք ամենակարևոր արտադրողներին
- Նախագծի հնարավոր գործողությունների ցանկը

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Տեխնիկական առաջադրանք

ԵՄ Թվինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15 2015թ. դեկտեմբերի 7-10-ը

Բաղադրիչ 1. Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ
Գործողություն 1.2: Սպառողների և արտադրողների հետ համագործակցություն I

0. Բաղադրիչի պարտադիր արդյունքներ և չափանիշներ

Պարտադիր արդյունքներ.

- Վիճակագրական տեղեկատվության տարածման բարելավված համակարգ (2017թ.հուլիս)

Չափանիշներ.

- Պատրաստի վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ (2017թ. հուլիս)
- Մշակված տեղեկատվության տարածման համակարգի ռազմավարություն՝ ընդունված Վիճակագրության պետական խորհրդի կողմից (2017թ. հուլիս)
- Սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացված, փորձարկված և ՀՀԱՎԾ կայքում հրապարակվածհարցաթերթ (2017թ. հուլիս)
- Վիճակագրական տեղեկատվության տարածման գծով վերապատրաստված ԱՎԾ անձնակազմ (2017թ. հուլիս)

1. Գործողության նպատակը

- Քննարկում՝ ինչպես գործ ունենալ վիճակագրության սպառողների հետ և բավարարել նրանց տարբեր կարիքները
- Ներկայացում և քննարկում՝ ինչպես մշակել փոխըմբռման հուշագրեր պետական մարմինների հետ տվյալների փոխանակման վերաբերյալ
- Քննարկում՝ ինչպես կազմակերպել սպառողների համակարգված վերապատրաստում
- Սպառողների և արտադրողների հետ համագործակցության պլանի մշակում
- Ընդգրկել համապատասխան շահառուներ այս քննարկումներում

2. Գործողության սպասվող արդյունք

- Սպառողների հետ համագործակցության ռազմավարությունը և ծրագիրը, այդ թվում նաև վերապատրաստումները և կազմակերպչական կարգավորումը
- Պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների հետ համագործակցության ռազմավարությունը և ծրագիրը, այդ թվում նաև կազմակերպչական կարգավորումը
- Ազգային վիճակագրական համակարգի ուրվագիծը (ԱՎՀ)

- Հաջորդ գործողության համար աշխատանքային ծրագրի սահմանում (1.3-ը ծրագրվածէ 2016թ. փետրվարի 29-մարտի 3)

3. Մասնակիցներ

<u>ՀՀ ԱՎԾ</u>
Բաղադրիչի ղեկավարներ
- Պրն Ստեփան Մնացականյան
- Տկն Անահիտ Սաֆյան
- Տկն Նարինե Մուշեղյան

Այլ աշխատակիցներ
- Տկն Սիլվա Ուլուբաբյան
- Տկն Նելլի Մարգարյան
- Տկն Գոհար Նշանյան
- Տկն Ալինա Հունանյան
- Տկն Արմինե Մարտիկյան
- Տկն Լիլիթ Կարապետյան

<u>ԱԵ փորձագետներ</u>
Տկն Անեգրետ Վուլֆ, փորձագետ, Վիճակագրություն Դանիա
Պրն Լարս Թիգիսեն, փորձագետ, Վիճակագրություն Դանիա

<u>Գործողությանը մասնակցող այլ շահագրգիռ կողմեր</u>
Նանկիրավիրվեններկայացուցիչներ.
- ԱՐ հեռուստաընկերության ներկայացուցիչ
- «Արմենպրես» լրատվական գործակալության ներկայացուցիչ
- «Արմինֆո» լրատվական գործակալության ներկայացուցիչ
- «ՊանԱրմենիա.նեթ» լրատվական գործակալության ներկայացուցիչ
- Հայաստանի հանրային ռադիոյի ներկայացուցիչ

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Առաքելության ծրագիր

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասներ
Երկուշաբթի, կեսօր	Հյուրանոց / ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ԹՄԽ հետ	Քննարկել շաբաթվա ծրագիրը
Երկուշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ընթացիկ իրավիճակի գնահատում Քննարկում՝ ինչպես գործ ունենալ վիճակագրության սպառողների հետ և բավարարել նրանց տարբեր կարիքները
Երեքշաբթի, առավոտ Երեքշաբթի, կեսօրից հետո	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ներկայացում և քննարկում՝ ինչպես մշակել փոխըմբռման հուշագրեր պետական մարմինների հետ տվյալների փոխանակման վերաբերյալ
Չորեքշաբթի, առավոտ,11:00	ՀՀ ԱՎԾ *Հանդիպումների սենյակ*	Հանդիպում շահագրգիռ կողմերի հետ	Հանդիպում շահագրգիռ կողմերի հետ
Չորեքշաբթի, կեսօրից հետո	ՀՀԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Քննարկում՝ինչպես կազմակերպել սպառողների համակարգված վերապատրաստում Սպառողների և արտադրողների հետ համագործակցության պլանի մշակում
Հինգշաբթի,առավոտ	ՀՀԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ	ԱԵ փորձագետների բացահայտումների ներկայացում և ձեռք բերված եզրակացությունների համաձայնեցում
Հինգշաբթի,առավոտ	ՀՀԱՎԾ	Չպլանավորված հանդիպումներ	Վերջնական պարզաբանումներ ԱԵ փորձագետների հետ, հաշվետվության պատրաստում և ներկայացում ՇԵ ծրագրի ղեկավարին
Հինգշաբթի, կեսօրից հետո	ՀՀԱՎԾ	Ամփոփիչ հանդիպում ԱԵ ծրագրի ղեկավարի հետ	Եզրակացություններ, առաջարկություններ հաջորդ գործողության համար և ՇԵ փորձագետների աշխատանքային ծրագիր

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Անձինք, ում հետ հանդիպել ենք

<u>ՀՀ ԱՎԾ.</u>
Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ
Անահիտ Սաֆյան, Վիճակագրության պետական խորհրդի անդամ
Նարինե Մուշեղյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
Նելլի Մարգարյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
Արմինե Մարտիկյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
Լիլիթ Կարապետյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
Գոհար Նշանյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
Սիլվա Ուլուբաբյան, Վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին
Աիդա Մարտիրոսյան, Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչություն
Սոնա Շահգելդյան, Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչություն
Տաթևիկ Ավետիսյան, Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչություն
Կարինե Եսայան, Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչություն
Հասմիկ Եղիազարյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
Ռուզաննա Շաբոյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
Հասմիկ Սողոմոնյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
Կարինե Կույումջյան, Մարդահամարի և ժողովրդագրության բաժին
Դիանա Մարտիրոսովա, Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժին
Հասմիկ Կարապետյան, Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին
Նելլի Բաղդասարյան, Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժին
Ն. Աստվածատուրովա, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժին
Մարինա Պետրոսյան, Շինարարության վիճակագրության բաժին
Վարդան Արևշատյան, Բիզնես ռեգիստրի բաժին,
Հայկուշ Թիթիզյան, Ֆինանսական վիճակագրության բաժին
Արտավազդ Գալստյան, Տպագրակազմարարական և պատճենահանման աշխատանքների բաժին
Լուսինե Քալանթարյան, Աշխատանքի վիճակագրության բաժին
Սիրանուշ Զեյնալյան, Աշխատանքի վիճակագրության բաժին

Անի Ալոյան, Ներքին աուդիտի բաժին
Անահիտ Ավետիսյան, Պարենային ապահովության վիճակագրության բաժին
Գայանե Գևորգյան, Արդյունաբերական վիճակագրության բաժին
Մարգարիտա Պետրոսյան, Գնումների գործընթացի կազմակերպման և տնտեսական բաժին
Արսեն Ավագյան, Գյուղատնտեսական վիճակագրության բաժին
Անահիտ Հարությունյան, Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժին
Քրիստինե Պողոսյան, Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժին
Արմենուհի Առուշանյան, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժին
Ռուզաննա Պետրոսյան, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժին

Արտաքին շահառուներ.
Ալիսա Գևորգյան, Հայաստանի հանրային ռադիո
Գևորգ Պերկուպերկյան, «Արմենպրես» լրատվական գործակալություն
Ալինա Հովհաննիսյան, «Արմինֆո» լրատվական գործակալություն
Կարո Սոլակյան, ՊանԱրմենիա.նեթ
ԱՐ հեռուստաընկերության ներկայացուցիչ

ԹՄԽ թիմ.
Պիտեր Բոհնստեդ Անան Հանսեն, Թվինինգ մշտական խորհրդատու
Մարգարիտ Բեջանյան, ԹՄԽ օգնական
Անուշ Պողոսյան, ԹՄԽ թարգմանիչ

ՀԱՎԵԼՎԱԾ 4. Սպառողների հանդիպմանը հնչեցրած հարցերը

1. Ինչպիսի՞ պաշտոնական վիճակագրություն եք Դուք օգտագործում և ո՞ր աղբյուրներից եք օգտվում:
2. Ի՞նչ եղանակով եք ստանում վիճակագրական տեղեկատվությունը (փոստ, էլ.փոստ, համացանց, գրադարան, հեռախոս, հանդիպումներ….) և նախընտրելի եղանակն արդյո՞ք լիովին բավարարում է Ձեր կարիքները:
3. Վերջին անգամ ե՞րբ եք վիճակագրական տվյալների կարիք ունեցել:
4. Արդյո՞ք ծանոթ եք պաշտոնական վիճակագրության մեթոդաբանությանը/փաստաթղթավորմանը:
5. Ի՞նչ աղբյուրներից եք օգտվում (www.armstat.am , www.armstatbank.am , www.armDevinfo.am, մամուլի հաղորդագրություններ, հրապարակումներ, տվյալների բազաներ, այլ):
6. Տեղյա՞կ եք «Վիճակագրական ցուցանիշների թողարկման օրացույցի» մասին
7. Տեղյա՞կ եք, որ առկա է «Վիճակագրական հրապարակումների օրացույց», համաձայն որի կանխավ հայտարարվում են հրապարակման ժամկետները:
8. Ըստ Ձեզ, արդյո՞ք պաշտոնական վիճակագրությունը հրապարակվում է հայտարարված ժամկետներում
9. Դուք Ձեզ տեղեկացված զգու՞մ եք հրապարակված վիճակագրությունում տեղ գտած սխալների մասին:
10. Դուք վստահո՞ւմ եք հրապարակված վիճակագրությանը և ի՞նչ կարծիք ունեք մյուս աղբյուրների վերաբերյալ:
11. Դուք օգտվո՞ւմ եք ՀՀ ԱՎԾ մամուլի հաղորդագրություններից, վիճակագրական բառարանից, բաց գրադարանից, գրադարանի էլեկտրոնային ցանկից:
12. Տեղյա՞կ եք վիճակագրական ցուցանիշների վերանայումների քաղաքականության մասին:
13. Հաղորդակցման ո՞ր ձևն եք նախընտրում ՀՀ ԱՎԾ-ի հետ:
14. Արդյո՞ք գոհ եք ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի որոնման համակարգից, գտնո՞ւմ եք այն ինչ փնտրում եք:
15. Օգտագործո՞ւմ եք արդյոք որոնման այլ միջոցներ (օրինակ՝ Google, Yahoo, Yandex ….
16. Ձեր կարիքները բավարարելու համար ՀՀ ԱՎԾ-ն ինչը՞ պետք է բարելավի:
17. Ի՞նչ եք կարծում, կարիք կա ՀՀ ԱՎԾ-ում նման հանդիպումների, սեմինար-պարապմունքների, վերապատրաստումների և ուսուցումների հաճախ կազմակերպման:
18. Տեղյա՞կ եք, որ ՀՀ ԱՎԾ-ն վիճակագրություն է արտադրում, սակայն չի կարող տրամադրել անհատական տվյալներ:
19. Դուք օգտվո՞ւմ եք այլ կազմակերպությունների կայքէջերից (ՀՀ կենտրոնական բանկ, Եվրամիություն, Համաշխարհային բանկ,….)
20. Ձեր ամենօրյա աշխատանքում ՀՀ ԱՎԾ-ն բաց և թափանցի՞կ է:

Ի՞նչ եք կարծում, հնարավոր է հեռախոսազանգով ստանալ Ձեզ անհրաժեշտ տեղեկատվությունը: